



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 մայիսի 2024 թվականի N 176 -Ա

«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՀՐԱՆՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ
ՏԵՂԱԿԱԼ ՆՈՒՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին
մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի
176-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպու-
թյունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ
մասով և հիմք ընդունելով «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ
առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող
Հ. Հայրապետյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Հրանուշ
Հայրապետյանին 2024 թվականի մայիսի 15-ից 16-ը ներառյալ տրամադրել
չվճարվող արձակուրդ:

2. Տնօրենի պարտականությունների կատարումը արձակուրդում գտնվելու
ընթացքում վերապահել նույն կազմակերպության մասնագիտացված կրթական
աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Նունե Ստեփանյանին:

2024-05-14 16:24:51 GMT+4
Հավաստված է էԷԵՆԲԻ կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ